

ՆՅՈՒԹԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ըստ մեզ հասած ավանդության՝ էլեկտրական երևույթներին առաջինն ուշադրություն է դարձրել Հին Հունաստանի յոթ իմաստուններից Թալես Միլեթացու (մ. թ. ա. 625-547թթ.) դեռատի դուստրը: Փորձելով մաքրել իր սաթե իլիկը մանր թելիկներից և փոշույ՝ նա նկատել է, որ դրանք դարձյալ կաշում են իլիկին: Հույները սաթի այլ խորհրդավոր հատկություններ էլ են հայտնաբերել: Շփելով սաթը մթության մեջ՝ տեսել են, թե ինչպես է ամբողջ կտորն արձակում կապտավուն կայծեր, որոնք ուղեկցվում են ճաթյուններով:

Սաթի խորհրդավոր հատկությունները գիտական լուրջ ուսումնասիրության առարկա են դարձել Թալեսից երկու հազար տարի անց: Սաթի հատկություններն առաջինը հետազոտել է անգլիացի բժիշկ և ֆիզիկոս Ուիլյամ Ջիլբերտը, որն Անգլիայի Եղիսաբեթ Առաջին թագուհու անձնական բժիշկն էր: Ջիլբերտը հիմնական աշխատանքից հետո զբաղվում էր էլեկտրականության և մագնիսականության փորձերով: Նա էլ էլեկտրականություն բառը ներմուծել գիտության մեջ: Իր կատարած բազմաթիվ փորձերի արդյունքում Ջիլբերտը մի շարք կարևոր եզրահանգումներ է արել, որոնցից մեկը հետևյալն էր՝ մագնիսի և սաթի ձգողությունները տարբեր բնույթի են: Այլ կերպ ասած՝ Ջիլբերտին հաջողվել է մագնիսական և էլեկտրական երևույթներն առանձնացնել իրարից: Միայն մեկ և կես դար անց անգլիացի մի ուրիշ գիտնականի՝ Ջեմս Մաքսվելին (1831-1879) հաջողվեց կրկին միավորել էլեկտրականությունն ու մագնիսականությունը, բայց արդեն՝ նոր հիմքի վրա: